

**Սոցիալական պաշտպանության համակարգը և երեխաներին
մատուցվող ծառայությունները Հայաստանի Հանրապետությունում
Մանկական Զարգացման Հիմնադրամ**

Անոտացիա

Մանկական զարգացման հիմնադրամը սույն հետազոտությանը անդրադարձ է կատարել Հայաստանում սոցիալական պաշտպանության և երեխաների իրավունքների պաշտպանության համակարգին և ուսումնասիրել երեխաներին մատուցվող ծառայություններին, համակարգում համագործակցային ընթացակարգերի և մեխանիզմներին առնչվող բաղադրիչը: Օգտվելով հետազոտման մի շարք մեթոդական գործիքներից՝ դուրս են բերվել երեխաների պաշտպանության ոլորտում կանխարգելման ու համագործակցային մեխանիզմների պակասի և ծառայությունների անհասանելիության խնդիրները: Այս հիմնախնդիրների որոշակի լուծման հնարավորությունների վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անտտացիա.....	2
Ներածություն.....	4
Մեթոդաբանություն.....	5
Սոցիալական պաշտպանության համակարգը.....	6
ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը.....	7
ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի և երեխաներին մատուցվող ծառայությունների վերաբերյալ հետազոտություն.....	9
Ընդհանուր տեղեկության հավաքագրում փոփոխվող օրենքների և բարեփոխումների շրջանակում.....	9
Հարցում Վայոց ձորի ծնողների շրջանում.....	9
Փորձագիտական հարցում երեխաների պաշտպանության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող դերակատարների հետ.....	13
Անհատական դեպքերի ուսումնասիրություն.....	13
Սոցիալական դեպքի նկարագիր.....	13
Հետազոտության արդյունքներն ու եզրակացությունները.....	15
Առաջարկություններ.....	17
Վերջաբան.....	18
Արստրակտ.....	19
Abstract.....	19

Ներածություն

Մանկական զարգացման հիմնադրամը (ՄՁՀ) հասարակական կազմակերպություն է, որն ապահովում է սոցիալ-հոգեբանական ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների և ընտանիքների համար: ՄՁՀ-ն ունի ՋարՄան սպասարկման կենտրոններ Երևանում, Վայքում, Ջերմուկում և Արենիում:

ՄՁՀ-ն այս հետազոտությամբ նպատակ ունի Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության համակարգի և երեխաներին մատուցվող ծառայությունների համատեքստում վերհանել մի շարք խնդիրներ և ներկայացնել դրանց բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Նախ ներկայացվում են սոցիալական պաշտպանության գաղափարն ու բաղադրիչները, ապա դիտարկվում են Հայաստանում առկա սոցիալական պաշտպանության ոլորտի համագործակցության համակարգերը, երեխաներին մատուցվող ծառայությունների հասանելիության բաղադրիչները: Հետազոտության ենթակա մեթոդներն ու գործիքները հետևյալն են՝ փաստաթղթային ուսումնասիրություն՝ առկա և փոփոխվող օրենքների ու բարեփոխումների շրջանակում, փորձագիտական հարցում երեխաների պաշտպանության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող դերակատարների հետ, հարցում Վայոց ձորի ՄՁՀ ՋարՄան կենտրոններում ծառայություն ստացող ծնողների շրջանում և անհատական դեպքերի ուսումնասիրություն:

Մույն ուսումնասիրությունը պարզել է, որ երեխաների պաշտպանության ոլորտում կանխարգելման ու համագործակցային մեխանիզմների պակաս կա, ինչպես նաև երեխաներին մատուցվող ծառայությունների հասանելիության և հավասարաչափ բաշխվածությանն առնչվող խնդիրներ են առկա: Հետևաբար ներկայացնում ենք կանխարգելման ծառայությունների հասանելիությունն ապահովելու և սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցության մեխանիզմներ և ընթացակարգեր սահմանելու, բարելավելու համար առաջարկություններ:

Մեթոդաբանություն

Սույն հիմնախնդիրներն ուսումնասիրելու նպատակով իրականացվել է հետազոտություն հետևյալ մեթոդներով՝

- 1) Փաստաթղթային ուսումնասիրություն՝ ընդհանուր տեղեկատվության հավաքագրում փոփոխվող օրենքների և բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու համար: Այս նպատակով ուսումնասիրվել են մի շարք օրենքներ և սոցիալական ոլորտի նոր ռազմավարությունը:
- 2) Փորձագիտական հարցում երեխաների պաշտպանության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող դերակատարների հետ, որի համար մշակվել է հարցաշար: Փորձագիտական հարցմանը մասնակցել է ոլորտի 7 դերակատար:
- 3) Հարցում հիմնադրամի Վայոց ձորի կենտրոններում ծառայություն ստացող բոլոր ծնողների շրջանում, որի համար մշակվել է հարցաթերթ: Հարցաթերթը լրացվել է առցանց կամ դեմ առ դեմ հարցման միջոցով: Այս մեթոդով տեղեկատվություն է հավաքագրվել 130 ծնողից:
- 4) Անհատական 10 դեպքի ուսումնասիրություն՝ սոցիալական դեպքերի փաստաթղթերի ուսումնասիրման և մասնագետների հետ հարցազրույցի միջոցով:

Սոցիալական պաշտպանության համակարգը

Սոցիալական պաշտպանությունը պետական և ոչ պետական մարմինների այն գործողությունների ամբողջությունն է, որն ուղղված է տնային տնտեսությունների ու անհատների՝ որոշակի ռիսկերի դիմագրավելու կամ կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնմանը:

Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակը պետության կողմից այդ ռիսկերի կառավարումն է՝ դրանց կարգավորման ու նվազեցման նպատակով:

Սոցիալական աշխատանքի մասնագետի գործունեության նպատակը բնակիչների սոցիալական պաշտպանվածության մակարդակի շարունակական բարձրացումն է:

Սոցիալական պաշտպանվածությունը վիճակ է, երբ համայնքի բնակիչների հիմնարար իրավունքներն ու ազատությունները կիրարկվում են, նրանց պահանջմունքների բավարարման և բնականոն կենսագործունեության համար առկա են անհրաժեշտ պայմաններ և բավարար ռեսուրսներ, բնակչության տարբեր խմբեր արդյունավետորեն պաշտպանված են սոցիալական ռիսկերի ազդեցությունից:

Սոցիալական ռիսկը որոշակի գործոններով պայմանավորված անցանկալի վիճակ կամ իրավիճակ է, որը կարող է հանգեցնել մարդու՝ սեփական պահանջմունքները բավարարելու հնարավորությունների սահմանափակման կամ դրա անհնարինության:

Սոցիալական դաշտում օգտագործվող որոշ հապավումներից մի քանիսն են՝

- 1) ԿԴԻԳ - Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող,
- 2) ԿԴԻՀ - Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված,
- 3) ՄՄԾ - Միասնական սոցիալական ծառայություններ

Այս համատեքստում ներկայացնենք, թե որոնք են ռիսկային ընտանիքներում ապրող երեխաները:

Ռիսկային ընտանիքներում առկա ռեսուրսները՝ նյութական, հոգեբանական, սոցիալական, բավարար չեն երեխայի խնամքը և սոցիալականացումը լիարժեք կազմակերպելու համար: Ընտանիքում երեխայի լավագույն շահի հետապնդումը ենթադրում է միջավայրին բարենպաստ գործոնների և երեխայի պաշտպանվածության ամրագրում:

Ընտանիքի ռիսկայնությունը գնահատելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել, թե որքանով է միջավայրը բարենպաստ և որքանով է երեխան պաշտպանված այդ միջավայրում:

Ռիսկային ընտանիքների հետ աշխատանքում կարևորվում է ընտանիքի վաղ հայտնաբերումը: Հայտնաբերումը հանդիսանում է սոցիալական պաշտպանության իրականացման հիմնական բաղադրիչներից մեկը, որը նաև հիմք է հանդիսանում մյուս գործընթացների՝ կանխարգելման, միջամտության, հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքների կազմակերպման համար:

Կանխարգելում-միջամտություն-հետևանքների վերացում շղթայում որքան շուտ է իրականացվում հայտնաբերումը, այնքան արագ կարող ենք արձագանքել խնդիրներին և թույլ չտալ, որպեսզի դրանք խորանան կամ քրոնիկ դառնան:

Վաղ հայտնաբերումը ենթադրում է աջակցության ցուցաբերում համայնքի այն բնակիչներին, որոնք հիմնախնդրի առաջացման պոտենցիալ ռիսկի գոտում են:

Իր այդ գործունեությամբ սոցիալական աշխատանքի մասնագետը ջանում է նպաստել, որ հիմնախնդիրներ չառաջանան կամ դրանք չսրվեն:

Սոցիալական պաշտպանության մյուս կարևոր գործընթացը կանխարգելումն է, որն իրականացվում է երեք մակարդակներում՝

- 1) առաջնային կամ համընդհանուր, որն արտահայտվում է իրազեկման, մեկնաբանման, իրավագիտակցության բարձրացման միջոցով՝ ուղղված համայնքի բոլոր բնակիչներին,
- 2) երկրորդային կամ ընտրովի. իրազեկում, գիտելիքների զարգացում, խորհրդատվության տրամադրում՝ ուղղված բնակչության որոշակի խմբերին,
- 3) երրորդային կամ թիրախավորված՝ վերականգողական աշխատանքներ հիմնախնդիր ունեցող անձանց հետ, համագործակցություն այլ մասնագետների հետ, թիմային աշխատանք:

Սոցիալական պաշտպանության կարևորագույն մասնիկներից է նաև մարդու իրավունքների պաշտպանությունը: Հետևաբար ՀՀ-ում երեխաների սոցիալական պաշտպանության համակարգը հասկանալու համար նախ դիտարկենք օրինական դաշտը:

ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը

ՀՀ-ում երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական համակարգի նպատակը երեխաների պաշտպանության միասնական և համակարգված քաղաքականության իրականացման ապահովումն է.

- Համայնքային մակարդակ՝ Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքով ամրագրված՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները հանդիսանում են երեխաների իրավունքների պաշտպանության առաջին մակարդակը, որոնք համագործակցելով մարզպետարանների աշխատակազմերի՝ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների հետ, իրականացնում են երեխաների իրավունքների պաշտպանությունը համայնքներում:

- Մարզային մակարդակ՝ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին

2006 թվականից գործում են մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, որոնց խնդիրն է մարզերում՝ ՀՀ Կառավարության կողմից հաստատված երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության իրականացումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի իրավունքների պաշտպանության ապահովումը և նպատակային ծրագրերի մշակումը և իրագործումը:

- Ազգային մակարդակ՝ երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով

ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել և 2005 թվականից գործում է երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովը, որի գործունեությունը հիմնականում ուղղված է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության երաշխիքների ապահովման միասնական պետական քաղաքականության իրականացմանը, ինչպես նաև երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող պետական կառավարման մարմինների, հասարակական, քաղաքական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցության համակարգմանը:

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի կիրարկման ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիր/ՀՀ կառավարության N 432-Լ որոշում, 2 ապրիլի 2020 թ.:

Ծրագրի նպատակն է ապահովել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի կիրարկումը և նրանց ներառումը հասարակություն:

Ծրագրի ակնկալվող արդյունքն է ունենալ՝

- 1) երեխաների իրավունքների պաշտպանության համակարգված գործունեություն,
- 2) հանրապետությունում այլընտրանքային խնամք տրամադրող համաչափ և ըստ կարիքի ծառայությունների ցանցի առկայություն, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին ուղղված մասնագիտական որակյալ ծառայություններ,
- 3) հաստատություններում խնամվող երեխաների խնամքի կազմակերպում ընտանիքներում, երեխաների մուտքի կանխարգելում հաստատություններ, երեխաների ընտանիքների կյանքի որակի բարելավում,
- 4) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կենսաբանական կամ ընտանեկանին մոտ միջավայրում ապրելու և զարգանալու իրավունքի կիրարկման վերաբերյալ հասարակության շրջանում իրազեկվածության բարձրացում,
- 5) երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների, ինչպես նաև երեխայի ցերեկային ծառայությունների համակարգի տարբեր կառույցների մասնագետների վերապատրաստում,
- 6) երեխաների իրավունքների պաշտպանության մշտադիտարկման և գնահատման միասնական և արդյունավետ տեղեկատվական գործող համակարգի առկայություն:

ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի և երեխաներին մատուցվող ծառայությունների վերաբերյալ հետազոտություն

Ընդհանուր տեղեկության հավաքագրում փոփոխվող օրենքների և բարեփոխումների շրջանակում

Սոցիալական պաշտպանության և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում ներկայում իրականացվում են մի շարք օրենսդրական կարգավորումներ՝ հետևյալ օրենքների շուրջ.


- 1) «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք,
- 2) «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենք,
- 3) ՀՀ ընտանեկան օրենսգրքում՝ երեխայի իրավունքների մասին և Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենք:

Ինչպես նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակում է սոցիալական պաշտպանության ոլորտի նոր ռազմավարություն, որն արդեն քննարկվել է ոլորտի պետական և ոչ պետական դերակատարների հետ և վերջնականացման ընթացքում է:


Հարցում Վայոց ձորի ծնողների շրջանում

ՄՁՀ-ի Վայոց ձորի Վայք, Ջերմուկ և Արենի Ջարժար կենտրոններում ծառայություն ստացող երեխաների ծնողների շրջանում կատարել ենք հարցում: ՄՁՀ Ջարժար կենտրոններում սոցիալ-հոգեբանական աջակցություն են ստանում կյանքի դժվար իրավիճակում գտնվող երեխաներ և ընտանիքներ: Քանի որ հիմնադրամը արդեն երկու տարի է ծառայություն է մատուցում որպես հասարակական կազմակերպություն, կարևորել ենք այս հետազոտության մեջ ներառել նաև այդ ծրագրերի շրջանակում պարբերաբար կատարվող հարցումը մեր կողմից մատուցվող ծառայություններ ստացող երեխաների և նրանց ընտանիքների հետ: Այս հարցումը հնարավորություն է տալիս տեսնել ՀԿ-ի կողմից մատուցվող ծառայություններին վերաբերող մի շարք խնդիրներ և հարցեր: Հարցումն իրականացվել է հիբրիդային մոտեցումով՝ դեմ առ դեմ և առցանց ըստ ծնողի հայեցողության, որից հետո վեր է լուծվել: Գրանցել ենք 130 ծնողի պատասխան: Ստորև կարող եք տեսնել հարցման արդյունքների մի մասը:

1. Ի՞նչ ծառայություններից է օգտվել կամ օգտվում Ձեր երեխան ցերեկային կենտրոնում.
130 responses




2. Նշեք Ձեր գնահատականը մատուցվող ծառայությունների վերաբերյալ՝ ընտրելով այն ծառայությունը կամ ծառայությունները որից, դ... վատ, 2-վատ, 3-բավարար, 4-լավ, 5-գերազանց/
130 responses



3. Ձեր կարծիքով արդյո՞ք Ձեր համայնքում առկա են այն բոլոր ծառայությունները, որոնք անհրաժեշտ են երեխաներին

130 responses




4. Ի՞նչ փոփոխություններ կբերեն նոր ծառայություններն ըստ Ձեզ երեխաների կյանքում


90 responses



6. Տրամադրված ծառայությունների արդյունքում ինչպիսի՞ արդյունք եք գրանցել
130 responses



10. Արդյո՞ք դուք ճանաչում եք Ձեր համայնքում սոցիալական աշխատողին կամ սոցիալական ծառայության մասնագետին
130 responses



Վայոց Ձորի ՋարՄան կենտրոններում ծառայություն ստացող երեխաների ծնողների շրջանում իրականացված հարցման արդյունքում առանձնացրել ենք վերը նշված մի քանի հարցերը, որոնք կապված են համայնքում սոցիալ-հոգեբանական ծառայությունների հետ: Ըստ այս հարցադրումների՝ դիագնոզներում հստակ երևում է, թե ինչ ծառայություններից են օգտվում երեխաները, ինչ ծառայությունների կարիք կա ըստ ծնողների և արդյոք համայնքում առկա են բոլոր այն ծառայությունները, որոնք անհրաժեշտ են, ինչպես նաև անդրադարձել ենք այն հարցին, թե որքանով են իրագրված ծնողները համայնքի սոցիալական աշխատողի կամ սոցիալական աշխատանքի այլ մասնագետի վերաբերյալ և ինչ արդյունք կարող են ակնկալել, եթե սոցիալ-հոգեբանական ծառայություններն ավելանան:

Փորձագիտական հարցում երեխաների պաշտպանության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող դերակատարների հետ

Հետազոտության շրջանակներում անց է կացվել փորձագիտական հարցում համայնքի սոցիալական աշխատողների, ՄՄԾ սոցիալական աշխատանքի մասնագետի, սոցիալական աշխատանքի փորձագետի, ՀԿ ոլորտում ծառայություն մատուցող կազմակերպությունների ղեկավարների և իրավաբանի հետ թվով 7 մասնակից: Երեխաների պաշտպանության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող դերակատարների հետ անցկացված փորձագիտական հարցումը ցույց է տվել, որ համայնքում կանխարգելման մեխանիզմների անբավարար լինելը պայմանավորված է համայնքային կառույցների միջև համագործակցային ցածր մակարդակով և երեխաների պաշտպանության բնագավառում գործող դերակատարների փոխգործակցության հստակ ընթացակարգերի բացակայությամբ: Համագործակցության հստակ ընթացակարգերի ու մեխանիզմների ներմուծմանն ու վերակազմակերպմանն անմիջականորեն ազդում են համայնքների խոշորացման, ինչպես նաև ծառայությունների ապակենտրոնացման միտումը, որը պայմանավորված է օրենսդրական և համակարգային ընթացիկ փոփոխություններով: Հատկանշական է, որ այստեղ հանդես են գալիս մասնագիտական ներուժի, միասնական տեղեկատվական հարթակի, առկա ռեսուրսների վերակազմակերպման խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված գործընթացները:

Անհատական դեպքերի ուսումնասիրություն

Երեխաների անհատական դեպքերի ուսումնասիրությունը կատարվել է պատահականության սկզբունքով ընտրված 10 երեխայի սոցիալական դեպքերի փաստաթղթերի վերանայման միջոցով: Լրացուցիչ տեղեկատվություն հավաքագրելու համար հարցազրույց է իրականացվել այդ երեխաների հետ աշխատող մասնագետների հետ: Այս ուսումնասիրությունը ցույց է տվել, որ համայնքում արտադպրոցական ծառայությունների, ցերեկային կենտրոնների, երեխաների զարգացմանն ու ներառմանն ուղղված մասնագիտական ծառայությունների պակասը հանգեցնում է մասնավորապես ռիսկային ընտանիքներում սոցիալական հիմնախնդիրների առաջացմանը կամ դրանց խորացմանը: Որոշ օրինակներ են երեխաների մոտ կրթական գործընթացի բացթողումները (կրթությունից դուրս մնալու ռիսկ), ծնողավարման հմտությունների ու կարողությունների պակասով պայմանավորված երեխաների նկատմամբ բռնությունն ու անտեսման վտանգը, երեխաների կողմից իրավախտումներ կատարելու կամ օրենքի հետ խնդիրներ ունենալու հետ կապված ռիսկերը և այլն:

Ստորև ներկայացվում է անհատական սոցիալական դեպքի օրինակ, որտեղ մասնագիտական ծառայությունները հանդիսանում են սոցիալական դեպքում արտացոլված հիմնախնդիրների լուծման արդյունավետության երաշխիքը:

Սոցիալական դեպքի նկարագիր

Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխան, որն ուներ խոսքի զարգացման հետ կապված խնդիր, մասնագիտական ծառայություններ է ստացել Մանկական զարգացման հիմնադրամի Ջերմուկի մասնաճյուղում: Թիմային աշխատանքի շրջանակներում ընտանիքն ստացել է համակողմանի աջակցություն՝ հոգեբանի, լոգոպեդի, հատուկ մանկավարժի, արտթերապևտի, ադապտիվ ֆիզկուլտուրայի ծառայություններ՝ ուղղված երեխայի զարգացման խնդիրների հաղթահարմանը, ինչպես նաև շփման հմտությունների բարելավմանը: Շարունակական աշխատանքներ են տարվել ծնողների հետ՝ երեխայի խնդիրը գիտակցելու, խնդրին օրյեկտիվ մոտեցումներ ցուցաբերելու, ինչպես նաև երեխայի ներառմանը նպաստելու առումով: Ընտանիքին

տրամադրվել են նաև առաջնային անհրաժեշտության պարագաներ՝ երեխաների նվազագույն կարիքները հոգալու նպատակով: Դեպքի հետ աշխատանքն իրականացվել է երեխաների պաշտպանության աջակցող ցանցի հետ ակտիվ համագործակցության շրջանակներում: Մոցիալական դեպքի վարման արդյունքում հաղթահարվել են երեխայի խոսքի զարգացման հետ կապված խնդիրները, որի շնորհիվ երեխան ներառվել է կրթական համակարգում, ինչպես նաև լիարժեքորեն ընդգրկվել է հասակակիցների միջավայրում: Մոցիալական աշխատողի միջամտության արդյունքում ընտանիքը ձեռք է բերել ինքնուրույնություն և ներկայում սեփական հիմնախնդիրների լուծման առումով կարողանում է առավել օբյեկտիվ որոշումներ կայացնել:

Հետազոտության արդյունքներն ու եզրակացությունները

Այսպիսով, հիմնվելով երեխաների պաշտպանության ոլորտում փորձագիտական հարցման, համայնքի ծնողների հետ անցկացված հարցումների, ինչպես նաև երեխաների անհատական դեպքերի շուրջ կատարված ուսումնասիրությունների վրա՝ դուրս են բերվել հետևյալ խնդիրները.

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում կանխարգելման ծառայությունների հասանելիության պակասը

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ներկայում երեխաներին մատուցվող մասնագիտական առկա ծառայությունները չեն համապատասխանում կարիքներին, քանի որ դրանք անհամաչափ են տեղաբաշխված՝ ըստ մարզերի և համայնքների: Այս խնդիրը պայմանավորված է խորհրդային համակարգից եկող և շարունակաբար վերակազմակերպվող գործընթացներով և դրանց զուգահեռ արագ փոփոխվող իրավիճակներով՝ COVID-19, պատերազմ և զարգացող տեխնոլոգիաների ազդեցություն: Խնդիրը պայմանավորված է նաև իրավիճակի պարբերական ուսումնասիրությունների, այդ ուսումնասիրությունների արդյունքների կիրառման, ինչպես նաև անհրաժեշտ մասնագիտական մոտեցումների բացակայությամբ:

- 1) Մասնագիտական ծառայությունների պակասը համայնքներում զարգացման խնդիրներ ունեցող երեխաների համար:
- 2) Ցերեկային խնամքի ծառայությունների պակասը համայնքի երեխաների համար:
- 3) Արտադպրոցական պարապմունքների, երկարօրյա խնամքի բացակայությունը կրթական հաստատություններում:
- 4) Կանխարգելման ծառայությունների՝ ծնողավարման, առողջ ապրելակերպի, բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների կազմակերպման հնարավորությունների բացակայությունը համայնքներում:
- 5) Այլընտրանքային խնամքի ծառայությունների պակասը (խնամակալ, խնամատար ընտանիքներ):
- 6) Համայնքային մակարդակում ճգնաժամային կենտրոնների, շուրջօրյա կացարանների բացակայությունը՝ ժամանակավոր ապաստանի կարիք ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար:

Ծառայությունների որակը

Երեխաներին մատուցվող ծառայությունների որակը պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ սկսած երեխայի միջավայրից մինչև մասնագիտական մեթոդաբանություն: Անհրաժեշտություն է առաջանում սահմանել ծառայությունների որակի չափանիշներ՝ հաշվի առնելով տվյալ ծառայության թիրախային խմբի առանձնահատկությունները: Որակի չափանիշներն անհրաժեշտ է առանձնացնել՝ հաշվի առնելով փոփոխվող հասարակության պահանջները, միջսերնդային առանձնահատկությունները և միջավայրային գործոնները: Մասնագիտական մեթոդաբանությունը կարևորվում է մասնագիտական կադրերի կրթական մակարդակի և անձնային որակների համընթաց ապահովմամբ, որը պետք է բխի բարձրագույն կրթական հաստատություններում մշակված ծրագրերից, համապատասխանի շուկայի պահանջներին, ինչպես նաև պետական ռազմավարական նպատակներին ու հեռանկարներին: Որակյալ ծառայությունների արդյունավետությունը պետք է ուղղված լինի պետական ռազմավարական նպատակներին հարելուն և դրանց իրագործմանը նպաստելուն: Այս նպատակով

նախ դիտարկենք, թե ինչ է սոցիալական պաշտպանությունը, ապա ուսումնասիրենք ՀՀ-ում երեխաների իրավական և սոցիալական պաշտպանության համակարգերը:

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում կանխարգելման ու համագործակցային մեխանիզմների պակասը

- 1) Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների հայտնաբերմանն ուղղված մեխանիզմների ու ընթացակարգերի բացակայությունը համայնքային և տարածքային մակարդակներում:
- 2) Սոցիալական ծառայության (ՄՄԾ) տարածքային կենտրոնների մասնագետների և համայնքային սոցիալական աշխատողների դերերի և լիազորությունների հստակ տարանջատման բացակայությունը:
- 3) ԿԴԻԳ երեխաների և նրանց ընտանիքների, նրանց տրամադրվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական միասնական հարթակի բացակայությունը:
- 4) Սոցիալական պաշտպանության բնագավառում առկա ծառայություն մատուցող կառույցների ու ծառայությունների վերաբերյալ միասնական տեղեկատվական հարթակի բացակայությունը:

Առաջարկություններ

Կատարված ուսումնասիրության արդյունքում դուրս բերված խնդիրների բարելավման համար ստորև ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները՝

Կանխարգելման ծառայությունների հասանելիության ապահովում երեխաների պաշտպանության ոլորտում

- 1) Համայնքներում զարգացման խնդիրներ ունեցող երեխաների համար մասնագիտական ծառայությունների և ցերեկային խնամքի ծառայությունների ներդրում՝ ըստ համայնքի տեղակայման դիրքի և կարիքի:
- 2) Արտադպրոցական պարապմունքների, երկարօրյա խնամքի ծառայությունների ապահովում և զարգացում կրթական հաստատություններում:
- 3) Կանխարգելման ծառայությունների՝ ծնողավարման, առողջ ապրելակերպի, բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների կազմակերպում և ռեսուրսների տրամադրում համայնքներում:
- 4) Այլընտրանքային խնամքի ծառայությունների ապահովումը (խնամակալ, խնամատար ընտանիքներ):

Երեխաների պաշտպանության ոլորտում կանխարգելման մեխանիզմների ու ընթացակարգերի բարելավում

- 1) Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների հայտնաբերմանն ուղղված մեխանիզմների ու ընթացակարգերի բարելավում համայնքային և տարածքային մակարդակներում:
- 2) Սոցիալական ծառայության (ՄՄԾ) տարածքային կենտրոնների մասնագետների և համայնքային սոցիալական աշխատողների դերերի և լիազորությունների հստակ նկարագրության և տարանջատման գործիքների մշակում, ընթացակարգերի սահմանում:
- 3) ԿԴԻԳ երեխաների և նրանց ընտանիքների, նրանց տրամադրվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական միասնական հարթակի ձևավորում, գործարկում:
- 4) Սոցիալական պաշտպանության բնագավառում առկա ծառայություն մատուցող կառույցների ու ծառայությունների վերաբերյալ միասնական տեղեկատվական հարթակի ձևավորում, գործարկում:

Վերջաբան

Այսպիսով, ՄԶՀ-ն դիտարկել է և վեր է հանել սոցիալական պաշտպանության ոլորտում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգերին առնչվող ՀՀ-ի իրավական դաշտի համապատասխան դրույթները՝ հիմք ընդունելով հիմնադրամի ծառայություններից օգտվող երեխաների և նրանց ծնողների հետադարձ կապն ու մասնագետների փորձառությունը, ում կարծիքները վեր են հանել ՀՀ-ում սոցիալական պաշտպանության ոլորտի մի շարք խնդիրներ: Ներկայացված հիմնախնդիրները՝ սկսած համագործակցության և կանխարգելման ընթացակարգերի պակասից մինչև ծառայությունների անհավասար բաշխում և դրանց տրամադրման որակը, միտում ունեն բարձրացնելու ՀՀ-ի բնակիչների խոցելիությունը:

Շատ կարևոր է քաղաքականություն մշակողների ուշադրությունը հրավիրել ներկայացված ուսումնասիրության վրա՝ հաշվի առնելով նշված առաջարկությունները սոցիալական պաշտպանության ոլորտում, մասնավորապես՝ երեխաներին մատուցվող ծառայությունների հասանելիության և որակի արդյունավետության ապահովման առումով:

Աբստրակտ

Այս հետազոտությունն ուսումնասիրում է Հայաստանում սոցիալական պաշտպանության և երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը, ինչպես նաև երեխաներին մատուցվող ծառայությունները: Արդյունքում դուրս են բերվել երեխաների պաշտպանության ոլորտում կանխարգելման ու համագործակցային մեխանիզմների պակասի և ծառայությունների անհասանելիության խնդիրները և ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

Բանալի բառեր. սոցիալական պաշտպանություն, երեխաների իրավունքների պաշտպանություն, սոցիալական ռիսկ, միասնական սոցիալական ծառայություններ, երեխաներին մատուցվող ծառայություններ

Abstract

This research examines the social protection and child rights protection system in Armenia, as well as the services provided to children. As a result, we have identified lack of preventive and cooperative mechanisms and unavailability of services as main issues that exist in the field. The research also presents relevant recommendations to address these issues and gaps.

Keywords: social protection, children's rights protection, social risk, unified social services, services provided to children